

ԳՐԱԿԱՆ

Ն Ա Մ Ա Կ Ա Ն Ի

ԱՐԵԱԿ ՀՕՊԱՆԵԱՆԻ

32

(Նախորդին նման, չորս թերթ :)

Փարփա, 19 Յուլիս 1936

Սիրելի Պ. Քիւրտեան,

Շատոնց է որ ստացած եմ ձեր վերջին նամակը (Փետր. 15)։ Կը ցուցի որ անկարող եղայ աւելի շուտ պատասխանելու։

Հայ փորագրչութեան պատմութեան վրայ ձեր յօդուածը չեմ կրնար հրատարակել, որովհետեւ պատկերները շատ են, մեծ ծախքի դռու կը բանայ ինձի, առելից զատ հայ արուեստ ալ չեն ատոնք, չահնկան են միայն իր եւրոպական արուեստի մեր մէջ արլիկասիօն, փորագրական արհեստի մեր մէջ նաև նախավորձեր։ Արդ կը զարձնեմ ձեզի յօդուածը ու նկարները։ Արդէն ունիմ ձեզ մէ քանի մը անտախ յօդուած, մինչև որ ատոնք հրատարակուին, նոր յօդուած մի դրկէք։ Կամ առաջուց հարցուցէք, նիւթը յայտնելով, թէ կ'ուղե՞մ Անահիւտի համար պահել այս ինչ յօդուածը։

Անահիւտի այն թիւէն ուր զորդերու վրայ ձեր յօդուածը երեւցաւ, կը զրկեմ ձեզի այսօր օրինակ մը եւս, որպէսզի նուէր տաք Պ. Դարամեանին։ Գորգերու ձեր յօդուածին պատկերները փնտուեցի որպէսզի այս յօդուածին հետ ձեզի զարձնեմ։ Զգայայ։ Արդեօք արդէն դրկեցի՞ ձեզի։

Պօղոս—Պետրոս եկեղեցիի հին որմանկարներու ձեր լուսանկարներն այ քանի մը ամժիս առաջ դտայ տեղ մը, եւ անկիւն մը դրի, որ ձեզի զրկեմ։ Այսօրանոնք ալ փնտուեցի ու չդտայ։ Արդեօք անո՞նք ալ դրկեցի ձեզի եւ մոռցեր եմ։ Այս բոլորը եւ ասոնց պէս զերիւր ենսակ աշխատանք պէտք է ես ինքո մինակս ընեմ, անհնար է համանիլ։ Բայց վստահ եղէք որ ոչինչ կը կորսըւի իմ քովս։ Եթէ չեմ զրկած ձեզի արդէն այդ պատկերները, օր մը կը գտնեմ զանոնք անշուշտ, եւ այդ անպայման անմիջապէս կը զրկեմ։

Հայրենիքի մէջ կարդացի ձեր յօդուածը Սիրանի վրայ։ Շատ շահեկան էր ուրեմն ոչ միայն մէկ Հայ Սիրան ունինք, այլ երկու։ Այդ յօդուածին տեղը Անահիւտն էր։ Մեզք որ ուրիշ տեղ զրկեցիք։

Անահիւտի բաժանորդներուն անպարտաճանաչութեան կ'ակնարկէք։ Անտանելի բան մըն է այդ անպարտաճանաչութիւնը։ Բաժանորդներուն թիւր պակասձ է, եւ մնացածներն ալ մեծ մասամբ չափազանց ուշ կը վճարեն։ Զեր դասձ բաժանորդներէն Յ. Քէշեան՝ Օգլահօմա Սիրի, և տարին վճարուծ է,

բայց պարտական է Զ. եւ կ. տարիներու բաժնեգինը : Արթիւր Այվազեանը՝ Դըլսո, Օդլահօմա, Շէլ Օիլ Քօ., պարտական է Դ., Ե., Զ. եւ կ. տարիներու բաժնեգինը : Այսօր այդ երկուքին նորէն զրեցի, ինչպէս եւ այնքան անպարտաձանաչ ուրիշ շատերու : Տեսնենք քանի՞ Հոգին պիտի պատասխանեն : Խնդրեմ, զուք ալ զրեցէք այդ երկուքին :

Սիրալիր բարեւներով
Զերդ
Ա. Զողանեան

Յ. Գ. — Դժբախտարար հաստատուեցաւ թէ Ազատի Խանճեան անձնասպան է եղեր : Բուն պատճառը դեռ որոշ չէ : Շատ ցաւալի դէպք մըն է առ : Խանճեան կարեւոր եւ օգտակար ուժ մըն էր :

Մանօքուրիմ : — Զարմանալի որ Զօղանեան կը զրէ որ ահազին նիւր ունի դիզուած, Ահանչիսի մէջ տեղ չկայ, եւ նոյնիսկ կը յանձնարարէ նոր յօդուած չզրկել, եւ նոյն ասեն կ'աւաղէ որ Սինամի մասին իմ ուսումնափրութիւնս այլուր իրատարակած եմ եւ թէ այդ «յօդուածին տեղը Ահանչիսն էր» :

33

(Գորշ բացիկ : Անքուական : Թղթատարի կնիքէն յայտնի է որ
1 Մայիս 1937ին զրկուած է Փարիզէն :)

Սիրելի Պ. Քիւրտեան,

Ստացայ ձեր 18 Ապրիլ թուակիր նամակը եւ ձեր նոր յօդուածը : Զեր նոր յօդուածը շահեկան է եւ մեծ տաւելութիւն մը ունի, այն որ կարծ է : Ուրեմն մամլոյ տակ եղած թիւին մէջ կը զնեմ զայն : Զեր (նախորդ թիւի յօդուածին) վրիպակներն ալ կ'երեւան : Մայիսին պիտի բացակայ ըլլամ Փարիզէն, բայց նոյն ամսուն 27ին դարձած կ'ըլլամ Փարիզ, ուրախ պիտի ըլլամ ձեզ եւ տիկին Քիւրտեանը հոս տեսնելով :

34

(Իր սովորական անգիծ սպիտակ բուդր : Մէկ քերք :)

Սիրելի Պ. Քիւրտեան,

Երկուքուկէս շարաթ առաջ Փարիզէն հեռացայ եւ տունց հասցէս ոչ մէկուն տալու՝ եկայ անկիւն մը քաշուիլ՝ գժուար գրական աշխատութիւն մը վերջացնելու համար : Զեր նամակը առի, բայց Շարաթ օրէն առաջ չեմ կարծեր որ Փարիզ դարձած ըլլամ : Շարաթ օր Փարիզ կ'ըլլամ ապահովագէս եւ տունս 9 միւ Սէյ պիտի սպասեմ ձեզի մէկուկէսին-երկուքին, կէսօրէն յետոյ :

Սիրալիր բարեւներով
Զերդ
Ա. Զողանեան

Ծանօթուրին.— Նամակը Զօպանեան ինծի դրկած էր Փարիզ իմ զբանաւած պանդոկու :

35

(Թղթատարական փոքր ծալուած նամակ :)

Փարիզ, 27 Մայոս - 1937

Սիրելի Պ. Քիւրտեան,

Զեր քարթը այս տառօս ստացայ, ժամը 10ին ձեզի Հեռախոսեցի, բայց ձեր պանդոկէն ըսին ինծի թէ դուրս երած էք: Այսօր ժամը 2ին եթէ կրթակար զալ ինծի, զիս տունը պիտի զանէք, նոյնպէս՝ վաղը աստու ժամը 9ին: Այսօր մինչեւ 2 ու կէս, վաղը մինչեւ 9 ու կէս պիտի սպասեմ ձեզի:

Սիրով ձերդ

Ա. Զօպանեան

Ծանօթուրին.— Այս ալ Փարիզ պանդոկ դրկուած էր:

36

(Թիւ 34ին նման :)

Սիրելի Պ. Քիւրտեան,

Երէկ ժողոցայ ձեզի ըսկու թէ վահան Մայէզեանը, զոր երէկ տառօս տեսայ, կը քափաքի ձեզ տեսնել: մեկնելէ որ առաջ օր մը Հանդիպեցէք Բարեգործականի պաշտօնատեղին, 11 Ազուէք Ալզոնի: Լաւագոյն է որ աստու մը երթաք, վասնդի կէսօրէն յետոյ երբեմն ժողովներ կ'ունենան:

Սիրալիր բարեւներով

Զերդ

Ա. Զօպանեան

Փարիզ, 28 Մայոս - 1937

Ծանօթուրին.— Այս ալ Փարիզ պանդոկ դրկուած էր:

37

(Թիւ 36ի նման, երկրորդ :)

Սիրելի Պ. Քիւրտեան,

Ստացայ ձեր Մայիս 11 թուակիր նամակը, ներփակ չինդ տոլար չէր բով, որ թէՀրանի Վ. Արքահամեանի 8րդ տարուան (1937) Անահիտի բաժնեա-

ԴՐԱ աշխատ է:

զինն է, և Իզնատիոս մանրանկարիչի վրայ ձեր յօդուածը ու այդ նկարչին մանրանկարներուն լուսանկարները : Շատ շնորհակալ եմ : Շնորհակալ եմ ժամանակ յորել եանին առթիւ ձեր արտայայտած աղնիւ զնահատական գլացումներուն համար :

Անահինի ներկայ տարուան 1—3 թիւը լոյս տեսաւ արգէն 3—4 շաբաթ առաջ: Թիւ 4-ր լոյս կը տեսնէ երկու ամիսէն, եւ ատոր համար ունիմ ուրիշ նիւթեր, մին՝ Պարօկաստանէն՝ բազմաթիւ պատկերներով, զոր չեմ կը բարձար յետաձել (որովհետեւ ծախքը արգէն բրած էմ), ուրիմն ձեր այս յօդուածը պատկերներով (կամ զէթ պատկերներուն մէկ ժամով) կը նամ հրատարակել 5—6 թիւին մէջ որ կ'երեւայ այս տարուան վերջերը: Քիչչէները հանել առաջ յետոյ՝ լուսանկարները կը զրկեմ ձեզի, եթէ կ'ուղղէք համքերել 4—5 աշխատ, այդ յօդուածը կ'երեւայ Անահինի մէջ, եթէ ոչ, զրեցէք, եւ յօդուածը ու նկարները գարճնեմ ձեզի:

Անհիմության 1937 թիւ 3-4 և թիւ 5-6 կը դրեհմ ձեզի այս նույնականության համար:

Ակադեմիկոս բարեւնելով

Ա. Զարգանեան

Фото 1η, 28 Ιουνίου 1938

38

(Նախորդին նւյան, չորս քերք :

$\phi_{mp/\eta}$, 26 $\phi_{Lm\mu}$. 1939

Սիրելի Պատման,

Դար մըն է որ չեմ զրած ձեզի, պատճառը ոչ միայն, ինչպէս զուշակ էր ձեր վերջին նամակով, չափազանց զրադած ըլլալս է, այլ եւ այն որ զուք վրայէ վրայ ինձի յօդուած կը զրկէք, այնպիսի յօդուածներ՝ որ իբրև ցրազմաթիւ նկարներով հրատարակման համար մեծ ծախքերու զուռ կը բանան, եւ այդ բոլորը հրատարակել չկարենայ ձեզի բացատրելն ալ երկայն զործ է : Ասկայն կարելի եւ ներելի ալ չէ չափազանց երկարել այս բառութիւնս, անոր համար այսօր գէթ հակիրճ նամակով մը կ'ուղեմ ըսել թէ իշխատիսս ժամբանկարիչին մէկ ձեռագրին նուիրած ձեր յօդուածը պիտի չկարենամ հրատարակել, որովհետեւ շատ բազմաթիւ են նկարները, եւ զուք կ'ուղեք որ անոնց ամէնուն ալ քիչէնները շինել տամ եւ մերատպութիւն հրատարակեմ, ինչ որ խոչոր ծախքի կը կարօտի : Ես ինքա այդ իդնատիսսի նկարազարդուած ձեռագրէն շատ աւելի բարձր արուեստով նկարազարդուած ձեռագիրներու լուսանկարներ ունիմ, եւ շատ, բայց չեմ հրատարակեր զանոնք Անահիտի մէջ, ոչ միայն որովհետեւ քիչէններու համար շատ ծախք պէտք է, ոչ միայն որովհետեւ տարին երեք թիւ լոյս տեսնող Անահիտի մէջ տեղ ալ զանել գծուար է այդ կարգի յօդուածներու, այլ եւ որովհետեւ կը նախընտրեմ այդ նկարները վերապահէլ թօղըրէի յաջորդ հատորներուն :

Գալով Նոր Զուզայի Ամենափրկչի վանքին տաճարին որմանկարնեղուն, Մինաս Նկարչի և յարակից նիւթերու վրայ ձեր յօդուածին, ուշ եկաւան: Եթէ Երեմեանի յօդուածէն առաջ հասած ըլլար ձեռքս, կը հրատարակիի: Բայց Երեմեան աւելի շուրջ հասցուց իր յօդուածը, և նկարներու շքեղ ճո-

խութեամբ մը , նկարներ որ զիւտ մըն էին եւ որոնց համար կ'արժէք հարկ եղած ծախքը ընել :

Զեր նոր յօդուածը Մինստ նկարչի եւ Մինստ Վելիմանեանի նոյն անձը շրջալուն մասին , շահեկան է , բայց յարմար չէ որ Անահիտի մէջ Հրատարակւուի , քանի որ Երեմեանի այդ յօդուածաշարքը դեռ չէ աւարտած : Այդ Երեք յօդուածները պիտի զարձնեմ ձեզի ի մօտոյ , և այդ ուղարկումն ալ , զոր պէտք է յանձնարարել , բաւական ծախքի պիտի նոտի : Լաւագոյն չէ՞ որ զրէք ինձի թէ այս ինչ նիւթին վրայ յօդուած մը ունիք՝ սաշափ պատկերով և Հարցնէք թէ կրնա՞մ Հրատարակւուի , ու նրը «զրկեցէք» զրեմ , այն ատեն զրկէք : Կը խնդրեմ որ այսուհետեւ այդպէս ընէք : Պիտի պահնմ միայն Հայկական կիոտածագործութեան վրայ ձեր յօդուածը , որ կը պարունակէ նորութիւններ , ինչպէս եւ Ստ . Թօմաթեցիի վրայ ձեր յօդուածը , որոնք պիտի Հրատարակւմ Անահիտի յառաջիկայ թիւերուն մէջ (վոքրը յաջորդ թիւին մէջ , ընթացիկ տարուան վերջները , ոչ աւելի առաջ , որովհետեւ դիզուած շատ բան ունիմ Հրատարակւուի) : Կիոտածագործութեան վրայ ձեր յօդուածին նկարներէն ուժոնք շատ անյաջող են իրր բերրուուխիօն , պիտի Հրատարակւմ միայն յուղողները :

«Հակիրճ նամակ» ըսի , բայց բաւական երկարեցաւ նորէն նամակս : Գիտեմ որ ձեր նամակներուն մէջ զեռ շատ բաներ կային , որոնց պէտք է պատասխանեմ : Առ ալ կ'ընեմ յաջորդ նամակով՝ որ կը յուսում թէ շատ շուշանար :

Սիրալիր բարեւներով

Զերդ

Ա . Զովանեան

Ծանօթութիւն .— Իգնատիոս մանրանկարիչի մասին յօդուածու սոկայն Զովանեան չվերադրանուց , այլ անակնկալօրէն իրատարակուած տեսայ 1939 Ապրիլ-Մայիս թիւին մէջ եւ միայն մէկ մանրանկարի լուսանկար չէր իրատարակուած : Երեմեան , որ Արամ Երեմեանն է , արդարեւ Անուշիտի մէջ երեւցաւ նոր Զուլայի որմանկարներուն մասին յօդուածաշարեռվ մը , ուր նպատակաւոր կերպով յարմարցուած յիշատակարաններ , անհիմն տեսութիւններ , սխալ տեղեկութիւններ առատօրէն կային : Ինձի զարմանք պատճառեց Զովանեանի մերժումը իմ նշդումներով յօդուածիս իրատարակութեան համար : Նոյնիսկ ողբացեալ ծերունազարդ Մեսրով Սէր գայթակղած էր հոն զրուածներէն ուժանց համար եւ առ այդ գրած էր ինձի : Կիոտածագործութեան մասին յօդուածս , ինչպէս նաեւ ուրիշ յօդուածներ խնդրեցի որ վերադարձի : Կիոտածագործութեան մասին աշխատութիւնս իրատարակեցի 1943ին Նիւ Նորքի Հայտառանեայց Եկեղեցի մէջ , երբ Գարեգին Արքեպատրի Յովսէկին կը խրմագրէր :

չունչ առնելու և գրական ծանր աշխատանք մը վերջացնելու : Չեր նշանակած վրաբակը պիտի երեւայ Անահիտի յառաջիկայ թիւին մէջ : Եթէ Փարփակ զառնամ (Սեպտեմբերի սկիզբը) Խղնատիսի պատկերներուն յուսանկարները կը դրկեմ ձեզի : (Ասկէ վերջ կու տայ ցանկը այն բաժանորդներուն որոնք դեռ իւրենց բաժնեգիները չեն վճարած : Դժբախտաբար բաղաբէս շատ հեռու . ինձի կարելի չեր բան գործ բողով եւ բաժնեգիները հետապնդել : Խեղճ Զօպան հան ամէն կողմէ նոյն դժուարութեան մասնուած էր : Կը խորհեկի օգնել իրեն բաժանորդ զանելով, սակայն յաջորդական տարիներուն բաժնեգին հաւաքելը բարական դժուար էր ինձի համար, երէ ոչ անկարելի : Յ. Քիւրուեան :

(Թիւ 38ի նման չորս թիրը :)

Փարփակ, 9 Ամի ԱԼ,

7 Սեպտ. 1939

Սիրելի Պ. Քիւրուեան,

9—10 օրէ ի մեր Փարփակ դարձած էմ : Գարձէս 2—3 օռ յետոյ պատեռապեր, որուն մօսալուս րլլալը կը զդացուէր, պայթեցաւ : Ահաւոր պատեռապեր, որուն վախճանը անշուշտ Գերմանիոյ պարտութիւնը պիտի ըլլալ, բայց որո՞ն պիտի տեսէ, որքա՞ն մարդկային կեանքեր վճացնելու և աւերակներ սիցելու պատճառ պիտի բլլայ : Ասուուած միտյն պիտէ : Գերման ավիօնները սկսուն արգէն փորձել զիշերանց զայ Փարփակի մրայ հուր կամ թոյն սիսելու, ուստի յաջողեցան, բայց կրծաւ բլլայ որ Հակառակ Ֆրանսաց կազմակերած գորեդ դժուարութեան, մերժը յաջողին : Չեմ պիտեր բնչալ^շս պիտի բնեմ կորուսէ զերծ պահելու համար բարգանելի թանկապին զիրքեր, ձեռադեսներ, ուղիւմաններ, արժէքաւոր նամակներ, կիսաւար զործեր, նօթեր, եւայիշ զոր ունիմ : Ամէն պարագայի մէջ, այսօր կը փութամ ձեզի զարձնել իդնասիսի մանրանկարներն ու ձեր թէրքուի բախումները : Ասուղեցի նսեւ որ մերժին թիւին մաս մը օրինակներուն մէջ միտյն ձեր յօդուածին էֆեր սիստ յառուց տորուած են, միւսները ձիչդ են, զժբախտաբար տպարանի տեսչութիւնը սիստ տորուած օրինակները չէ վճացուցած և զանոնք ալ զրկեր է բաժանորդներու սուրուած ալ տրդ սիստամիա օրինակներէն մին է որ ստացէր էք : Այսօր կը զրիմ ձեզի ձիչդ տպաւած օրինակ մը : Անահիտի Հաստարակութիւնը յարունակելի հիմա տեսիլի դժուարացած է : բայց պիտի յարունակեմ, ո՛չ միտյն ուրացնեմ զործը կը սիրեմ, այլ եւ սրուժնեմեւ իմ ապրուստի զրեթէ մհջոցն է : Ֆրանսայէն բաժնեցիներ զանձնել Հիմա մէծ մասմբ կը ուղարկանաւ, բայց առար երկիրներէ բաժանորդներ, եթէ բարի կամեցազաւթիւն ունին, իրնոն նորէն զիւրու վճարել իրենց բաժնեցինը : Ես ինքո մտազիր եմ կում մնայ Փարփակի մէջ, որ ունիմ ուրիշ պարասկանութիւններ ալ կատարելու, կամ Փարփակն ոչ շատ հետու տեղ մը՝ աւերիշ օդանաւերու ձամունն միտ, զանուաց տնկիւն մը քաշուիլ եւ երեմն զայ Փարփակ եւ կարդ մը Հանրային զործերու մասնակցի : Այս երկրորդ կերպով տեսէլի յաւ պիտի կարենամ աշխատիլ, բայց ալ տւելի ծախքի զուռ բացող կերպ մըն է ապրելու... : Ինչ որ է, թող Ասուուած հետն բլլայ մեր սիրելի Ֆրանսային եւ մեզի ամէնուու : Կը խնդրեմ ուրեմն ձեզմէ որ ոչ միտյն Պարսկաստանի մէջ ձեր զամած բաժանորդին, այլէն Ամերիկայի մէջ ձեր զամած քանի մը բաժանորդներուն բաժնեգիները բնչքան

կարելի է չուտ գանձելով համեմ ինծիք ինծիք դրկելու, նախորդ նամակովս մանրամասնութիւնները տուած էին ձեզի:

Միբալիր բարեւներով

Զերդ

Ա. Զօպանեան

Մամօրութիւն.— 1939 նոյ. 30ին Փարիզին ստացայ վերջին բացիկ մը պատերազմին սկիզբը, ուր կրկին կը խնդրէր բաժնեգիններ գանձել եւ իրեն դրկել: Վերջին համակ մը գրեցի 7 նոյեմբեր 1940 բուակիր եւ իրեն դրկեցի: Նամակս ինծիք վերադարձուեցա գրաբնուութենէն բացուած եւ վրան ֆրանսը ու անգլիերէն կինուած քէ «Ճառայութիւնը առկախեալ է» (բդրատարական):

Պատերազմէն վերջ դարձեալ սկսանք բդրակցիլ:

41

(Անգիծ սպիտակ մէկ թերթ բուդր :)

Փարիզ, 3 Օգոստ. 1945

Միբելի Պ. Քիւրտեան,

Ամերիկահայոց առաջնորդական փոխանորդ եղիչ վարդապետ Միմոնեանէն ստացայ նամակ մը, որով ինծիք իմացուցած էր թէ ձեզմէ ստացած է տասը տոլարի նուէր մը ինծիք համար, զոր յանձնած է Բարեկործականի դրասնեակին: Ձեր նուէրը Անահիտի համար է անշուշտ: Արոշած ևմ անոր հրատարակումը վերակսիլ, գէթ տարուան մէջ երկու միացեալ թիւ: Նոյեմբերին կամ Դեկտեմբերէն առաջ չեմ կարծեր որ կարենամ ի լոյս ընծայել առաջին թիւ: Թուրթը, տարագրութիւնը հիմա շատ սուղ են հոս, որովհետեւ Փրանքին արժէքը շատ ինկած է եւ իմ ունեցած Փրանքներու քանակութիւնս առ այժմ շատ համեստ է:

Յառաջիկայ տարուան անշուշտ ինծիք յօդուած մը կը դրկէք:

Այստեղ լոյս տեսնող Արեւմուտք չարաթաթիրթին մէջ կարգացի թէ Պոլսէն մէծարժէք Հայ ձեռագիրներ (Ազգ. Մատենագարաննէն եւ Պատրիարքարաննէն) դոլցուելով Ամերիկա դրկուեր են ծախուելու, եւ թէ զուք ի միջի տյլոց զներ էք Վարք Աղեքսանդրի ձեռագիր մը ծաղկեալ եւ նկարեալ Գրիգորիս Աղթամարցիէ: Վարք Աղեքսանդրի ձեռագիր մը՝ Գրիգորիս Աղթամարցիէ նկարագրադուած ևս տեսած ևմ Երուսաղէմի վանքի մատենագարանին մէջ եւ բոլոր նկարներուն լուսանկարները ունիմ ու պիտի հրատարակեամ Փրանքներէն ստուար աշխատանքի մը մէջ՝ Վարք Աղեքսանդրիի ուրիշ ձեռագիրներու նկարներուն հետ: Դուք տեսած ըլլալու էք Երուսաղէմի ձեռագիրը: Ուշըմն Գր. Աղթամարցի երկո՞ւ անգամ նկարագրադած է այդ նոյն Վարք Աղեքսանդրին ու երկութին նկարները տարբե՞ր են իրարմէ: Եթէ տարբեր են, կը խնդրեմ որ ձեր օրինակին լուսանկարները զրկել հաճէքը ինծիք:

Միբալիր բարեւներով

Զերդ

Ա. Զօպանեան

(Նախորդին նման երկրեր :

Փարիզ, 9 միւ Մէջ

10 Օգոստ. 1945

Արքայի Պ. Քիւրտեան,

Ստացայ ձեր 12 Յուլիս թուակիր քարթը : Ձեր զրկած ծրարը, որուն համար սրատագին չնորհակալութիւններո կանխաւ կը յայտնեմ, դեռ ձեռքս չը- հասաւ : Միախառութ բարեկամի մը պիտի տամ : Ուրիշ անդամ եթէ ծրարը դրր- կէք ինծի, ծխախոտ մի՛ զնէք մէջը : Ինը տարիէ ի վեր մէկ սիկարէթ բերանս զնմ դրած, և ատոր համար է որ առողջական վիճակո հիմա աւելի լաւ է քան ինը տարի առաջ : Հրանդ Սամուելը կը տեսնեմ, կը հարցնեմ թէ ստացա՞ծ է ձեր ծրարը : Նոյնը պիտի հարցնեմ Հ. Պէրպէրեանին, զոր տեսնելու առիթ քի՞ ունիմ :

Գր. Աղթամարցիկ այդ ձեռագրին վրայ զոր ձեռք մէկ, ձեզի ուղա- ղած վերջին համակիր մէջ արդէն զրած էք : Գր. Աղթամարցիկ նկարազարդը- ւած Աղեքսանդրի Վարքի ձեռագրի մը կը զանուի Երուսաղէմ, տեսած ըլլալու էք, անոր բոլոր պատկերները լուսանկարել տուած եմ ևս պիտի հրատարակեմ ուրիշ տեղուանք գտնուող նոյն Վարքի ուրիշ նկարազարդ ձեռագիրներու պատկերներուն հետ զոր ունիմ, «Ծիօնըրէ»յի չորրորդ հատորին մէջ որ նը- ւիրուած է Վարք Աղեքսանդրի հատրնտիր կաֆաներուն թարգմանութեան մը (յառաջարան, ծանօթադրութիւններ, և այլն), շահէկան ու չքեզ հատոր մը պիտի ըլլայ, զոր տարի մը յետոյ, երբ կացութիւնը աւելի նպաստաւոր ըլլայ և հարկ եղած կարեւոր զումարը զտնեմ, տպարանին պիտի յանձնեմ : Ձեր ու- նեցած ձեռագիրը տարրե՞ր է Երուսաղէմինէն թէ նոյնն է, կամ նոյնին կրկո- նութիւնը : Եթէ տարրեր է, անպատճառ կ'ուզեմ ունենալ ատոր պատկերնե- րուն ամբողջական հաւաքածոյին լուսանկարները : Եթէ կ'ուզէք, նախ Անա- հիսին մէջ կը հրատարակեմ այդ լուսանկարներուն լաւագոյններէն խումբի մը վերաբատատպութիւնը՝ ձեռագրին վրայ ձեր կողմէ զրուած յօդուածի մը հետ, յետոյ բոլոր նկարներուն վերաբատադրութիւնը կը զնենք հատորին մէջ : Իսկ եթէ ձեր ունեցածը Երուսաղէմի մեր վանքինն է կամ անոր մէկ գօրին է, աւելորդ է լուսանկարները դրկելնիդ :

Արքայի բարեւներով

Զերդ

Ա. Զապահեան

Շնորհակալութիւնմբ ստացայ ձեր երկու շահէկան յօդուածներուն

«Թիրամ ա բարդ»ը, զոր ինծի զրկեր էիք :

Մանօրութիւն :— Դժբախտաբար կարելի չէր Զապահեանի ցանկու- թիւնը գոհացնել : 95է աւելի մանրանկարները եւ բազմարի ծաղկումները լու- սանկարել խոշոր զործ էր :

Հրամ. Յ. Քիւրտեան

(Հար. 4) Համար 14: